Ա. ՏԱՐԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ 12 ՅՈՒՆԻՍ 1897 ԹԻՒ 5

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
20 Թիւի համար
Վառնա . . . . . Գր. 1,50
Վառնայէն դուրս . . . » 2
Արտասահման . . . . . » 2,50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չեն ղրկուիր:
Նամակ դրամ եւայլն ղրկել հետեւեալ հասցէին,
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ԿԱՏԱԿ»ի
Վառնա (Պուլկարիա):

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՒԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието „ГАДАГЪ“ ВАРНА (България).

Հատը 7 1/2 Սանթիմ

Administration du journal «GADAG» VARNA, (Bulgarie).

ԼԵՌԱՆ ՍԱՐԴԸ

Ժողովուրդը չը բարկացնենք:

Ծուռ գծին վրայ ուղիղ ճանապարհ վնտռելը ախմարութիւն է, տանակութիւն է: Զինաստանի ճամբով Հայաստան շուտով հասնելու ծրագիրը՝ տգայամտութիւն է, ախմախութիւն է:

Ամեն կողմ ու տեղ իւր անցքը՝ իւր մուտքը ունի, Հայաստանի ճամբան ո՛չ Զինաստանն է, և ոչ ալ Հնդկաստանը կամ Ամերիքան, ինչպէս կը կարծեն Թիֆլիսի Տէրի Պօճուրի Հայդուկապետները ու Տրապիզոնի ահաբեկիչներու ջատագովները, «թուրք Պահրին թեթեւ կերպով վիրաւորուած է, ժողովուրդը ոգեւորուած է, թուրք խուժանը կատղած է ու ահաբեկիչները ազատ են,» ահա դաշնակցականի թռուցիկ դրօշակի յայտարարութիւնն, սակայն այսօր Տրապիզոն չի կայ, եօթը հարիւր տուն (700) Տրապիզոն՝ իւր Արապեանով ու Մարանեանով փճացած, ոչնչացած է, Հայաստանի միակ նաւահանգիստը Տրապիզոն՝ Հայութենէ դատարկուած է ու աւերակ: Հայկական գաւառներու մէջ ծայր ու ճոխ արիւնը կը մնայ այսօր ու թուրք մելեռանդութիւնը դանակը սրած ու սեպամուխ բերերը պատրաստած առաջին պատճառին կսպասէ Հայութիւնը խոպառ ջնջելու:

Սթափինք հայ ժողովուրդ, սթափինք այլ եւս, արտաքին թշնամիներէ աւելի զգուշանանք այն տօնիշոտ ծրագրականներէն՝ որոնք մեզի այս տեղ բերին ու տակաւին կուզեն զմեզ շահագործել իրենց երկսեռ հաճոյքները կատարելագործելու համար:

Սթափինք հայ ժողովուրդ, ուշաբերինք ու խելքերնիս տուն կանչենք, ժողովրդական բուռն կազմակերպութեամբ գոյութեան դատը պաշտպանելու և Հայ հայրենիքին ինկած պատիւը փրկելու: Մեծ է ժողովուրդի պարտքը՝ և եւս առաւել մեծագոյն նորա կոչումը, ժողովրդական միութեամբ ու անոր անկեղծ, հարազատ ընտրեալներովը միայն կարելի է դանել շիտակ գիծը և ուղիղ ճանապարհը: Գոլերու, ապացուցեալ դրամաշորթներու միութիւնը՝ միութիւն չէ, «ի կորուստ մարդկան միաբանին և դեւք.» գրուած է սուրբ գրքին մէջ: Բաւական է խաբուեցանք, բաւական է շորթուեցանք, ըսթափինք ու ճանչնանք թէ ի՞նչ խառնուրդներն որոնք կ՚ուզեն առաջնորդել զմեզ իրենց չը տեսած ու չը գիտցած տեղն . . . :

Հին սխալները համբերելու և հինցած խարխուլները քանդելու և կամ նոր յա-

տակագիծ մը ցոյց տալուն առջեւ նորագոյն սայթաքում, խարխափանք ու գահավէժներ կը դան օր օրի ասպարէզը մթագնելու, ձեռք ու ոտք կարկելու, սունկի պէս սխալներ կը բուսնին ամէն կողմ, պառակտմանց դուռ կը բանան, վիճաբանութիւններու, կռիւներու և մինչև անգամ տեղի կը տան այլազան հայհոյանքներու, ծայրայեղութիւններու։

Մէկ կողմանէ երբ կուզէնք ձաղկել, խարազանել ու մտրակել կարգ մը անիշխանական ցուցարար ու ցուցամոլներու ղեղծմունքները, բայց միւս կողմանէ չենք կրնար անտարբեր գտնուիլ ուրիշ կարգ մը չուկայի (չարշըըը) աղա տայիֆերու բռնած ընթացքնուն ու արարքներուն, որոնք տեղի կը տան չափաւորներուն իսկ չափի սահմանն անցնելու և սխալեալ ծայրայեղութիւններ գործելու։

Ունճեան Աբիկի համար դաւաճան է, մատնիչ է կ՚ըսուի, ինչպէս Գարակէօզ Տիգրանին կամ Եղիա Շահպազին և անոնց նման չտաներուն. զո՞վ դաւաճաններ կամ մատներ են պէտք է ցոյց տրուին, ապա թէ ոչ մենք կ՚ըսենք, կատարելապէս զրպարտութիւնք են այդ անձնաւորութեանց համար և միանգամայն ամօթ գրողին։ Ունճեանի համար կարելի է թերեւս ըսել խենդ ու պուտալա է որ, Պոլիսը թող չի տար և դուրս ելնելով Հայկական յեղափոխութեան մասնախմբի մը գանձապետը լինել չի փափաքիր, նոյնպէս Գարակէօզ Տիգրանը՝ որ իւր գործունէութեամբ և կծծիութեամբը հարստացած է, բայց բարեքէն զատ ի՞նչ չարիք ըրած էր։ Եղիա Շահպազը պառաւական բուղումպաճիական հայհոյանք գիտէ, բայց ոչ դաւաճան, վաշխառու և կամ մատնիչ մ՚է։

Մեր Տիւնճէ յարգելի եղբայրը ըսած էր թէ՝ կան խոստովանութիւններ որոնք քաւութիւն կը գտնան, իսկ կան ալ այնպիսի մեղքեր որոնց յայտնութեամբ կը ծանրանան. Ունճեանի ինչպէս և նորա նմաններուն մատնիչ ու դաւաճանները նոյն իսկ անոնցմէ դրամ չորթողները են, որոնք անպատկառ կերպով այսօր կուզեն աղտոտել իրենց բարերարներուն անունները, սակայն տեղը չէ հիմա այս տեսակ խնդիրներու մանրամասնութեան մէջ մտնել։ Մեծն Սանասարեանի համար ալ ըսողներ եղան թէ՝ խաղի մէջ վաստըկած գումարն է որ ազգին նուիրեց, որովհետեւ իր ամբողջ հարստութիւնը փոխանակ իրենց կտակելու ազգին նուիրած էր։

Այս ամենու հետ սակայն լաւ հասկըցած ենք թէ, մեր Ազգին մէջ Հայ հարուստներ չունինք, և ոչ ալ ըստ ընկալեալ սովորութեան մեծատուն էֆէնտիներ, մեր հարուստ կարծած կամ անուանած էֆէնտի, մըսթըր, կօսբօտին կամ աղա տայիֆերն պարզապէս ընկոյզի պէս համրուած կարգ մը առ ու ծախական չէրչիներն են, վաճառական գործակալներ, Եւրոպայի չահատակներու մնացած ու կտաւն կամ ապրանքներուն փոխադրող ու հայթայթող յանձնակատարներ, մենք չունինք ո՛չ միլիօնէր և ո՛չ ալ միլեառտէր հարուստներ, մանաւանդ՝ Վառնայի նման մի քաղաքի մէջ ուր որ հազիւ ազատուած Թուրքի գազանաբարոյ բռնապետութենէն նոր ոտք ելած ազգ մը պէս խարխափանօք կ՚աշխատի իր ներքին չինազարդութեամբ, կեղտոտ Թուրքի յատկանիշը եղած գարշահոտ աղբնոցներն մաքրելու ու Վառնան՝ Քրիստոնեայ քաղաքի մը վերածելու։

Սակայն երբ կը տեսնուի որ, ինչպէս Թռուցիկ յայտարարութիւն մը մատնացոյց ըրած էր, ազատ պուլկարիոյ նման մի երկրի մէջ ասպարէզ ու ապաստան գտնուող նիւթական շատ ցած կարգ մը

Հայ չէրչի գաճաճներ Հայաստան թուրքին Ճէպաւոր գործակալին առջեւ թըրջած հաւու պէս կը կծկտին, կը քծնին ու անոր աբտէսթլի կամ չարթէսլի թաճիկները լիզելով ու ոսկի բուրվառով խունկ կը ծխեն, ու ամբողջ Քրիստոնէութիւնը ջնջելու համար ի զէն կոչուած Թուրք զինուորին ի նպաստ ծրար ծըրար գումարներ մատուցանելու չափ կը նուաստանան. եւ եթէ այս ըսուած ու գրուածք ստոյգ իրողութիւններ են, մենք ալ կը համարձակինք ըսելու թէ այդ կարգի արարածներուն մէջ բարոյական կատարեալ սնանկութիւն կը տիրէ, որ լաբիւրինթոսին մէջ ինկած են և աններեսաբար կը գործեն ինչպէս Ցաճկաստանին մէջ նոյնպէս և անկէ դուրս ազատ Պուլկարիոյ մէջ ալ յանուն Հայ ժողովուրդի և հետեւաբար տեղի կը տան ժողովրդական արդար զայրոյթին։

Ջարդողին դրամ տալ, ջարդել տուողին ալ դրամ տալ և այս կերպով խրախուսել ժողովուրդի երկու ծայր թըշնամիներն ալ, արդար ժողովուրդին պատիւը չարաչար գործածուած լինելուն մի յայտնի ապացոյցը համարուելով տեղի տրուած կը լինի ժողովուրդին՝ որ մի քիչ խիստ վարուի այս աստիճան իւր անունը ու պատիւը իրենց դրամագլուխ շինող այս ու այն թզուկներու հետ։

Յ. ԶԱՔԸՐԵԱՆ

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

Առ Անաստաղի

Անհունութեան մէջ լիաբուռ
Միլեաններով ցանուած սփիւռ
Աստեղց ի հոյլ ո՞վ կը նայի
Խօսէ՛, չքնաղդ Անաստաղի։
Աստղն անզոյգ եթէ Դու չ'ես
Որ մահացուաց սրտերն թուլցես,
Ուրեմն անշուշտ Արեւ Լուսին
Աստեղք բոլոր պատրանք են սին։

Ա՜խ, հոգեզմայլ ծաղկարանի
Յ'որ աչք հայիլ իսկ վարանի,
Ծաղկանց ի խումբ ո՞վ կը շողայ
Ձերդ մարգարիտ կամ չափիւղայ։
Եթէ Դու չ'ես փունջը միակ
Որ պաշտուի Երկնքի տակ
Ուրեմն անշուշտ վարդ ու շուշան
Զոր տերեւներն են հէգ աշնան։

Ի ծոխ հանդէս Տիեզերքի
Մի օր մի ժամ եթէ սարքի
Ականց ի շար ո՞յք պիտ՝ փայլին
Որո՞ց ի տես, սրտեր փլին։
Թէ ստամներդ չ'են միայնակ
Անզուգական քարն անքանդակ
Ուրեմն անշուշտ յակինթ գոհար
Զ'են, բայց եթէ պատրուշ քար։

Աչերդ ինչո՞ւ, աչերդ այդ մեծ
Երկնից կապոյտն օրինակեց.
Էն նախանձոտ հպարտ ու գոռ
Հո՞ն փոխարինց իւր վէհ աթոռ։
Եթէ երկինք աչացդ համգոյն
Ա՜խ, չ'ունենար կապտորակ գոյն
Ո՞վ պիտ՝ պաշտէր շատով քիչով
Հաստատութիւնն իր Հաստիչով։

Հրեշտակաց նմո՞յշն ես հող
Որ մահացուաց դաս ի ծանօթ.
Զիա՞րդ սակայն ընկերքդ վերին
Հիմայ առանց Քեզի կ'ապրին։
Բայց թէ վշտաց այս ի ծործոր
Զըլլայիր այնց պատգամաւոր
Ո՞վ պիտ՝ ճանչնար առանց Քեզի
Հրեշտակներն, Անաստաղի։

Ուրուական

ԼՈՒԾՈՒՄՆ ԹԻՒ 3 ՀԱՆԵԼՈՒԿԻ

—o—

Կարմիր ծովն է կղպանք
Գաւազանն է բանալիք
Հրէից փախուստ համարձակ
Փարաւոնն ինկաւ ի ծուղակ

Գ. Տ.

ՀԱՆԵԼՈՒԿ. ԹԻՒ 4

—o—

Գլուխս է բադին, ուր կը վառի հուր,
Բերնէս դուրս կ'ելնէ թանձր ծուխ ու մուր
Փորըս ալխտանոչ՝ ծփայ անդադար,
Երբոր հողմըն գայ ու չնչէ նոյն վայր։

ԿԱՐՈՅԻ ՈՒ ՆԱՏՈՅԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

— Աղբըրճէն, դուն ի՞նչ ես.

— Ի՞ս, ես գէօմլեգէ իմ.

— Աղբըրճէն, ինմա՞լ կ'եղնի գէօմլեգէն.

— Իսա ղ լինչի ծէր մի քիչ մաղ մուրուք թաղնելով, իսա՛ բոլլթօ վէր թեւ առնելով, իսա մի հասաը մէջս ձեռքին բռնելով, իսա՛ մի ճէմի փարչէ վէր քիթ լին անցընելով վէ ես գէօմլեգէ իմ՝ ասելով ինմա՞լ գէօմլեգէ կ'եղնի. ես գինամ.քի իսա գէօմլեթէչի, ասա ալլուսթ վէ ալլուսթ ճամպաղութին է, մեր, իչի պօչին բռնել վէ իրենց փոր լըցնել. վալլահ էս ինասս ե, պաշղա բան չի.

— Ապա ինչպէ՞ս կ'եղնի գէօմլեգէն.

— Աղբըրճէն, էկէր դուն չես գինար, որ ես կասեմ.քի ինմա՞լ կեղնի գէօմլեգէն.

— Իկուր խէտ ինծ, երթանք վէր սարուն, մարդինկան վէր կուրծ.քիս, թալեմ վէր վէր ախուշմնէն. աէ տեսնիմ ղինմա՞լ կ'եղնի գէօմլեգէն։

ՍՕՍԻԱԼԻՍԹԼԻՔ ՍԻՄԵՐԻՍԻ

Պիր Թրամվայ իչինտէ ևանքէսէճինին պիրիսի ևանընաա օթուրան պիր մուսիւնին եան ճէպինտէն կիւմիւշ թիւթիւն դութուսընը աշըրըր իքէն՝ մուսիւ տույուպ՝ հէման գօլընտան թութար։

— Էլինին պէնիմ ճէպիմտէ նէ՞ իշի վար։

— Մուսիւ ... չէյ ... աֆիվ իտէրսինիզ ... էլիմին հիչ դայաղանաթը եօղ. քէնտի ճէպիմի զաննէ իթտիմ։

— Բէք կիւզէլ, է՛յ պէնիմ կիւմիւշ դութումըն սէնին էլինտէ նէ՞ իշի վար։

— Ա՛ դուզում, էլիմին կէօզիւ եօղ քի՛ պէնիմ վէ սէնին դութունը ֆարգ իթսին։

Պախտսուզ պիր վադըթտան պէրու Սօցիալիսթլիք Էրմէնիլէրէ տախի սիրաաթ իտիպ պէնիմ վէ սէնին ճէպինին ֆէրգի օլմայաճաղը կիպի, տիւնեաատա սանա ախտ օլան՝ պէնիմ, վէ պանա ախտ օլան տէ սէնին անմէք օլտըղը էլան պի՞լմէյօրմըսըն։

ՀԱՅ ՄԵՌՆՈՂՆԵՐԻ ՕԳՏԻՆ ՀԱՄԱՐ «ԿԱՏԱԿԻ» ԳԱՆՁԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՑՈՒԵԼ Է

—o—

ա. բ. գ. դ. ե. զ. ից, 200 կան գաղ. ֆը՛ռ.
է. ը. թ. ժ. ի. լ. ից, 100 կան ռուս. խմբը՛ռ։
խ. ծ. կ. հ. ձ. ղ. ից, 100 կան ամերկ. ալը՛ռ։
ճ. մ. յ. ն. շ. ո. ից, 500 կան անգղ. սթը՛ռ։
չ. պ. ջ. ռ. ս. վ. ից, 250 կան մաճառ. քը՛ռ։
տ. ր. ց. ւ. փ. ք. ից, 250 կան օսման. լը՛ռ։
եւ. օ. ֆ. ից, 200 կան պարսկական ղը՛ռ։

«Կատակ» իր խորին խնդութը յայտնում է այս այբենգիմակալան նախրատուներին որոնք հաճել են իրանց ողորմածութեամբ ընթերցողներին Հայերէն գիր էլ սորվեցնել. փողերը անմիջապէս ուղարկըվեց երկինք մաննաւոր պալօնով։

Ձինասատանի երկնային կայսրութիւնն ալ բարեհաճել է ուղարկել 2000 Ձինի պնակներ, «Կատակ»ի միջոցաւ, չուտով կը բաժնվին յայտնի Հայ պնակալէզներին։

Ա Զ Դ

Ինչպէս յայտնի է Պատ. Բաժանորդաց մեր թերթը կանխիկ է։ Անոնք, որ ընդունած են բաժանորդագրութիւնը, կը խնդրենք, որ ղրկեն մեզ բաժնեգինը. իսկ անոնք, որ չեն ընդունիր, թերթը ետ դարձունեն չուտով։

Կատակ կը ծախուի նաեւ հետեւեալ տեղերն։

Սասունի սրճարանին ծխախոտավաճառ Պ. Թէրզեանի մօտ. Մուսալլա, Ապտուրրահման մզկիթին դիմացը Պր. Ս. Զարդհանէլեանի եւ Մուսալլա, Վասպուրական սրճարան Պ. Գէորգ Տ. Յարութիւնեանի մօտ։

Отговорникъ: П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.